

ԲԱԺԻՆ 4. ՄՇՏԱԿԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Բնակչության տնտեսական բնութագրերի մասին տեղեկատվությունը վերաբերում է ՀՀ 2011թ. մարդահամարին նախորդող շաբաթում (հոկտեմբերի 4-11-ը) 15-75 տարեկան մշտական բնակչության տնտեսական ակտիվությանը:

Մեթոդաբանական պարզաբանումներ

4.1 Տնտեսապես ակտիվ բնակչության թվաքանակի ցուցանիշում ներառվել են **զբաղվածներն ու գործազուրկները**, ովքեր դիտարկված ժամանակահատվածում (2011թ. հոկտեմբերի 4-11-ը) աշխատանքի շուկայում ապահովվել են աշխատուժի առաջարկը՝ ապրանքների և ծառայությունների արտադրության համար:

Զբաղված բնակչության թվաքանակի ցուցանիշում ներառվել են 15-75 տարեկան բոլոր այն անձինք, ովքեր 2011թ. հոկտեմբերի 4-11-ը.

- ունեցել են վարձու կամ ոչ վարձու աշխատանք, անկախ այն հանգամանքից՝ աշխատանքը եղել է մշտական, ժամանակավոր կամ սեզոնային, միանգամյա կամ պատահական (առնվազն մեկ ժամվա),
- տարբեր պատճառներով պայմանավորված՝ ժամանակավորապես, բացակայել են աշխատանքից,
- զբաղված են եղել տնային կամ գյուղացիական տնտեսությունում, իսկ թողարկված արտադրանքը նախատեսված է եղել լրիվ կամ մասնակի իրացման, կամ բացառապես սեփական վերջնական սպառման համար, եթե այդ արտադրանքը նշանակալի մասնաբաժին է ունեցել տնային տնտեսության սպառման մեջ,
- առանց վարձատրության աշխատել են տնային տնտեսությանը կամ ազգականին (բարեկամին) պատկանող ընտանեկան կազմակերպությունում՝ օգնելու, օժանդակելու նպատակով:

4.2. Զբաղված բնակչությունը դասակարգվել է ըստ զբաղվածության հետևյալ կարգավիճակների

- **Վարձու աշխատողներ՝** համարվել են այն անձինք, ովքեր աշխատել են գործատուի հետ կնքած պայմանագրի, ինչպես նաև՝ աշխատանքի ընդունվելու հրամանի կամ գրավոր (բանավոր) որոշակի համաձայնության հիման վրա և ստացել են դրամական և/կամ բնաիրային փոխհատուցում՝ աշխատավարձ կամ դրան հավասարեցված այլ միջոցներ: Վարձու աշխատողներ են համարվել նաև այն տնօրենները, կառավարիչները և այլ ղեկավար պաշտոններ զբաղեցրած անձինք, որոնք հաճախ կատարում են նույն գործառույթները, ինչ գործատուն, սակայն ովքեր ստանում են աշխատավարձ և/կամ դրան հավասարեցված այլ միջոցներ, այլ ոչ թե՛ եկամուտ գործունեությունից:
- **Գործատուներ՝** համարվել են այն անձինք, ովքեր ինքնուրույնաբար կամ մի քանի գործընկերների հետ միասին ղեկավարել են իրենց սեփական բիզնեսը և մշտապես վարձել մեկ կամ ավելի աշխատողներ:
- **Ինքնազբաղվածներ գյուղացիական տնտեսությունում՝** համարվել են այն անձինք, ովքեր զբաղված են եղել գյուղացիական տնտեսությունում եկամտաբեր գործունեությամբ, ինքնուրույն՝ առանց վարձու աշխատողների ներգրավման, կամ **ժամանակավոր ներգրավմամբ:**
- **Ինքնազբաղված այլ գործունեությամբ՝** համարվել են սեփական գործ ունեցող այն անձինք, ովքեր ինքնուրույն զբաղված են եղել եկամտաբեր (ոչ գյուղատնտեսական)



գործունեությամբ, ինքնուրույն՝ առանց վարձու աշխատողների ներգրավման, կամ **ժամանակավոր** ներգրավմամբ:

• **Ընտանիքի օժանդակող անդամներ՝** համարվել են այն անձինք, ովքեր աշխատել են տնային տնտեսությանը կամ ազգականին (բարեկամին) պատկանող ընտանեկան կազմակերպությունում (տնտեսությունում)՝ օգնելու, օժանդակելու նպատակով և չեն ստացել դրամական և/կամ բնաիրային փոխհատուցում:

• **Արտադրական/սպառողական կոոպերատիվի անդամներ՝** համարվել են այն անձինք, ովքեր աշխատել են ապրանքների արտադրության և ծառայությունների մատուցման կոոպերատիվում և հանդիսացել են ակտիվ (աշխատող) անդամ, մյուս անդամների հետ հավասար իրավունքով մասնակցել են արտադրության կազմակերպմանը, արտադրանքի իրացմանը, կազմակերպության անդամների միջև եկամուտների բաշխմանը:

• **Այլ կարգավիճակներ ունեցողների թվին են դասվել** այն անձինք, ում զբաղվածության կարգավիճակը թվարկված դասակարգումներից ոչ մեկում ներառված չէ:

4.3 Գործազուրկների թվաքանակի ցուցանիշում ներառվել են 15-75 տարիքի բոլոր այն անձինք, ովքեր հաշվետու ժամանակաշրջանում միաժամանակ բավարարել են հետևյալ երեք պայմաններին՝

- չեն ունեցել աշխատանք կամ եկամտաբեր զբաղմունք,
- դիտարկված ժամանակաշրջանին նախորդող վերջին չորս շաբաթվա ընթացքում ակտիվորեն փնտրել են աշխատանք՝ օգտագործելով ցանկացած միջոց,
- համապատասխան աշխատանքի առաջարկի դեպքում պատրաստ են եղել անցնելու աշխատանքի՝ առաջիկա երկու շաբաթվա ընթացքում:

Գործազուրկների թվին են դասվել նաև այն անձինք, ովքեր նշել են, որ չեն փնտրել աշխատանք, որովհետև.

- գտել են աշխատանք և կանցնեն աշխատանքի առաջիկա երկու շաբաթում,
- դիմել են աշխատանքի ընդունվելու խնդրանքով և սպասում են պատասխանի:

Առաջին անգամ աշխատանք փնտրողներին են դասվել այն անձինք, ովքեր նախկինում ընդհանրապես չեն աշխատել և աշխատանք են փնտրել առաջին անգամ:

Տնտեսապես ոչ ակտիվ 15-75 տարեկան բնակչության մեջ ներառվել են բոլոր այն անձինք, ովքեր հաշվետու ժամանակաշրջանում չեն աշխատել կամ զբաղված չեն եղել որևէ եկամտաբեր զբաղմունքով և մարդահամարի դիտարկվող ժամանակահատվածում չեն փնտրել աշխատանք (այսինքն չեն եղել **գործազուրկ**) հետևյալ պատճառներից մեկով պայմանավորված՝

- պատրաստվում են հեռանալ հանրապետությունից,
- պատրաստվում են տեղափոխվել ՀՀ-ում այլ բնակավայր,
- վարում են տնային տնտեսություն,
- աշխատանք գտնելու հույս չունեն,
- չգիտեն՝ որտեղ կամ ինչպես փնտրել աշխատանք,
- առաջարկվող աշխատանքի վարձատրությունը բավարար չէ,
- չունեն մասնագիտական համապատասխան հմտություններ,
- չունեն աշխատելու անհրաժեշտություն/ցանկություն,
- սովորում են,
- տարիքային/ առողջական,
- այլ,

կամ փնտրել են աշխատանք, սակայն պատրաստ չեն եղել անցնել աշխատանքի առաջիկա երկու շաբաթում:



Տնտեսական ակտիվության մակարդակը հաշվարկվել է 15-75 տարեկան տնտեսապես ակտիվ բնակչության և 15-75 տարեկան բնակչության թվաքանակների տոկոսային հարաբերությամբ:

Գործազրկության մակարդակը հաշվարկվել է գործազուրկ բնակչության և տնտեսապես ակտիվ բնակչության թվաքանակների տոկոսային հարաբերությամբ:

Ջբաղվածության մակարդակը հաշվարկվել է զբաղված բնակչության և 15-75 տարեկան բնակչության թվաքանակների տոկոսային հարաբերությամբ: